

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՇԱՔՐՈ ՄՅՈՅԱՆ (Ծննդյան 70-ամյակի առթիվ)

Լրացավ ականավոր պատմաբան, Հայաստանում քրդագիտության զարդացման նվիրյալ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, Շվեդիայի քրդական գիտությունների և արվեստի ակադեմիայի անդամ, Մոսկվայի քրդագիտական հետազոտությունների կենտրոնի տնօրեն, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Շաքրո Խուդոյի Մհոյանի ծննդյան 70-ամյակը:

Շ. Խ. Մհոյանը ծնվել է

1930 թ. ապրիլի 12-ին Հայաստանի Արագածի շրջանի Ալագյազ գյուղում, ծառայողի ընտանիքում: 1948 թ. ավարտելով տեղի միջնակարգ դպրոցը, ընդունվել է Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը: Ինստիտուտն ավարտելուց հետո 1952–1954 թթ. աշխատել է Ալագյազի միջնակարգ դպրոցում որպես պատմության ուսուցիչ: Հետագայում 1956–1960 թթ. եղել է «Խոյա թաղա» թերթի խմբագրի տեղակալ:

1960 թ. Շ. Մհոյանը աշխատանքի է անցել Հայաստանի Գիտությունների ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտում, որտեղ վարել է սկզբում

կրտսեր դիտաշխատողի, այնուհետև բաժնի վարիչի պաշտոնները: 1963 թ. նա պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Քրդական ազգային-ազատագրական շարժումները իրաքում երկրորդ համաշխարհային պատերազմից հետո» թեմայով, իսկ 1978 թ.՝ Մոսկվայում դոկտորական ատենախոսություն՝ «Քուրդ ժողովրդի ազգային ինքնավարության հիմնահարցերը իրաքում» թեմայով: 1990 թ. պրոֆ. Մհոյանը ընտրվել է Հայաստանի ԳԱԱ թղթակից անդամ, իսկ 1996 թ.՝ իսկական անդամ: 1994 թ. ակադեմիկոս Շ. Մհոյանը հրավիրվել է Մոսկվա և ստանձնել քրդագիտական հետազոտությունների կենտրոնի տնօրենի պաշտոնը, կենտրոն, որի առջև բարդ և պատասխանատու խնդիրներ են դրված: Նա սերտորեն համագործակցում է Հայաստանի ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի հետ:



Ակադեմիկոս Շ. Մհոյանը ականավոր քրդագեա է և ծանրակշիռ աշխանդ է ներդրել Հայրենական քրդագիտության զարգացման մեջ: Նրա գոչին են պատկանում 10 մենագրություններ և մի քանի տասնյակ գիտական հոդվածներ, որոնք քաջ Հայտնի են և բարձր համարում ունեն մեր երկրում և նրա սահմաններից դուրս: Լայն ճանաչում ստացած մենագրություններից են «Քրդական ազգային-ազատագրական շարժումներն իրաքում երկրորդ համաշխարհային պատերազմից հետո» (Երևան, 1965), «Քուրդ ժողովրդի ազգային ինքնակարության հիմնահարցերը իրաքում» (Երևան, 1977), «Քրդական հարցը իրաքում երկու համաշխարհային պատերազմների միջև ընկած ժամանակաշրջանում» (Ստոկհոլմ, 1987, թուրքերեն), «Քրդական հարցը իրաքում նորագույն ժամանակաշրջանում» (Մոսկվա, 1991, ռուսերեն) և այլն: Նա հեղինակակիցն ու խմբագիրն է «Քուրդիստանի պատմություն» ծավալուն մենագրության, որը լույս տեսավ Մոսկվայում 2000 թ.: Դա Հայրենական և արտասահմանյան քրդագիտության մեջ առաջին լուրջ փորձն է ի մի բերելու քուրդ ժողովրդի պատմությունը և ստեղծելու մի ամբողջական ուսումնասիրություն: Նշված աշխատությունները, որոնք լույս են տեսել Հայերեն, ռուսերեն, քրդերեն, անդլերեն և արաբերեն լեզուներով, բացահայտում են քուրդ ժողովրդի նորագույն շրջանի պատմության ցարդ չուսումնասիրված հանգուցային հիմնահարցեր:

Ճանաչված քրդագետ Շ. Մհոյանի հետաքրքրությունների շրջանակները շատ լայն են. քրդական շարժումների հիմնական գործոնների վերլուծություն ու բնութագրում, քրդական ազդային շարժման զաղափարախոսության հիմնահարցերը արդի փուլում, քուրդ ժողովրդի պատմական ճակատագրում իսլամի խաղացած գերը, միջազգային գործոնները քրդական հարցի լուծման գործում և այլն: Այդ հարցերի շուրջ նա բազմաթիվ ելույթներ է ունեցել միջազգային գիտաժողովներում: Ակադեմիկոս Շ. Մհոյանի անվան հետ է կապված արդի փուլում քրդական ազատագրական շարժման գաղափարախոսության հիմնական գործոնների համակողմանի ուսումնասիրությունը:

Հատուկ դնահատականի են արժանի Շ. Մհոյանի՝ իսլամի հարցերին նվիրված ուսումնասիրությունները, որոնց մեջ ցույց է տրվում քուրդ ժողովրդի պատմական ճակատագրում իսլամի խաղացած գերը: Համարձակությամբ և նորարարությամբ աչքի ընկնող այդ ուսումնասիրությունները և այնտեղ փաստարկված հետևողական ու եզրահանդումները, քննարկվող հիմնահարցերի յուրահատկության հետևանքով, ունեն ոչ միայն տեսական, այլև գործնական նշանակություն: Դրանցում հայրենական և արտասահմանյան արևելագիտության մեջ առաջին անգամ բացահայտված է այն մեխանիզմը, որի պատճառով մահմեդական կրոնը, ամբողջությամբ վերցրած, արգելակող գեր է խաղացել քուրդ ժողովրդի ազգային ձևագործան և ազգային ինքնադիտակցության զարգացման մեջ: Համոզիչ փաստարկված է այն հիմնադրույթը, որ իսլամական գործոնի խաղացած գերն ու նշանակությունը նույնը չէ տիրապետող մահմեդական ազգի և նրանից կախյալ նույնադապական այլ ժողովուրդների համար:

Ակադեմիկոս Շ. Մհոյանը խոշոր ներգրում ունի հրաքում քրդական շարժման հետազոտման բնագավառում: 1991 թ. Մոսկվայում լույս տեսած նրա ծավալուն մենագրությունը նվիրված է հրաքում քրդական հարցի ամբողջական պատմությանը: Այդ բարձրարժեք ուսումնասիրությունում առաջին անգամ սահմանված են քրդական ազգային շարժման զարգացման փուլերը, ամփոփված է քրդական ազգային պրոբլեմի էությունը և ընույթը ընդունող միջազգային գործոնների ամբողջությունը: Դա հնարավորություն է ընձեռում ճիշտ ընկալելու մերձավորաբեկյան այդ բարդ պրոբլեմի զարգացման ուղիներն ու միտումները:

1981–1994 թթ. ակադ. Շ. Մհոյանը հմտորեն վարել է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի քրդագիտության բաժնի աշխատանքները: Խոր և բազմակողմանի գիտելիքները, քրգերեն լեզվի, գրականության, բանահյուսության և ազգագրության խոր իմացության շնորհիվ նաև մեծապես նպաստում են բոլոր ուղղություններով քրդագիտական ուսումնասիրությունների արդյունավետությանը: Նա հատուկ ուշադրություն է դարձնում հայ-քրդական պատմական կապերին, հարաբերություններին, մշակութային փոխառնչություններին: Նա քննադատում է պատմության տարբեր շրջաններում տեղ գտած սիամաներն ու թերությունները: Ակադեմիկոս Շ. Մհոյանի ջանքերով մշակվեց ԽԱՀՄ տարբեր շրջաններում բնակչող քրգերի սոցիալական վիճակի ու զարգացման հեռանկարների հաջոցը: Քրդական ազգային մշակույթի զարթոնքն ու զարգացումը հայաստանում և քրգերի հայրենակիցների ծանր վիճակը Ագրբեջանում և մյուս երկրներում ընկած են ազգային հարցերին նվիրված նրա հոդվածների և միջազգային կոնֆերանսներում կարդացած գեկուցումների հիմքում:

1994 թ. աշխատելով Մոսկվայում, Շ. Մհոյանը շարունակում է սերտ կապեր պահպանել ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի հետ, ապրում է Հայաստանի հոգսերով: Մոսկվայում նա ակտիվ մասնակցում է հայկական համայնքի աշխատանքներին: Հայոց Եղեռնի 80-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովում նա հանգես եկավ ազգային փոքրամասնությունների նկատմամբ անհանգուրժողականության թուրքական քաղաքականության հիմքում ընկած գործոնների մասին գեկուցումով և գատապարտեց այդ քաղաքականությունը:

Ակադեմիկոս Շ. Մհոյանը գիտահետազոտական աշխատանքները սերտորեն գուգակցել է մանկավարժականի հետ՝ գասախոսելով երևանի պետական համալսարանի Արևելագիտության ֆակուլտետում: Առաջին անգամ նա է կազմել քուրդ ժողովրդի սլատմության դասընթացը: Նա ղեկավարում է երիտասարդ մասնագետների և ասսիրանատների աշխատանքները, իր գիտելիքներն ու հարուստ փորձը հաղորդում նրանց: Երկար տարիներ նա եղել է արևելագետների գիտխորհրդի անդամ, հանդիսացել է «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ» մատենաշարի քրդագիտությանը նվիրված հատորների խմբագիրը:

Ակադեմիկոս Շ. Մհոյանը բազմակողմանի և խոր դիտելիքներով օժտված քրդագետ է: Նա ճանաչված հեղինակություն է արտասահմանյան քրդական դիտամշակութային և հասարակական շրջաններում, արևմտաեվրոպական քրդական մի քանի հրատարակչությունների և դի-

տական կենտրոնների պատվավոր անդամ է: Նա վայելում է իր ընկերների սերն ու հարդանքը: Բոլորած 70 տարիները չեն թուլացրել նրա հետաքրքրություններն իր նախասիրած պրոբլեմների շուրջ: Շնորհավորում ենք ակադ. Շ. Մհոյանի 70-ամյա տարելիցը և երկար կյանք ու ստեղծագործական նորանոր հաջողություններ մաղթում նրան:

ԳՈՒՐԳԵՆ ԳԵՂԱՄՅԱՆ